

Հարաց կամ ճօրով եւ զարպով, այլ միշտ սիրան առաջին հաւատն է. իսկ արապներն կատարեալ քրիստոսեանք են: 115

Եւ ունի Փափն երկու մեծ կալիօն կէմի, որ ամէն ամի ընու մարդով եւ ուղարկէ յերուսաղէմ. զպաշարն, զինին եւ զայլ խարճն փափէն է. ով ուղէ՝ կ'երթայ:

FIORENZA

Կայր սահմանակից Փափին եւ մերձ կրան-Տուքայ Ֆլօրէնս, որ է մեծ դուքս: Եւ զի սա յոյժ մեծարի եւ քաջ է, զօրաւոր եւ յազմող եւ յաջողակ ի պատերազմի եւ ելանէ ի վերայ ծովու եօթն զատրդով միայն, բայց մեծամեծօք. եւ այնպէս հնարաւորք են, որ բազում անգամ մինչեւ ի Պօղոզ-հիսար եւ մերձ Ստամպոլայ կղզիքն մտանեն, աւար հարկանեն եւ գերեալ տանին: Այլ եւ ի վերայ ծովու զորս եւ գտանեն Թուրքաց նաւս, զնաւս 10 ընկղմէին, զինչս առնուին, զմարդիկն գերի վարէին, զորս ի սուր ձգէին, զորս ի սուր մաշէին. այլ եւ ծովեզերաց գիւղս եւ քաղաք քանդէին եւ վա՛յ եւ եղուկ ամէն այլազգաց. բայց զքրիստոնեայս անվնաս արձակէին. զի 15 յոյժ տեղեակք են մարտի ծովու քան ցամաքի:

Եւ ունէր սա ի քաղաքն Ֆլօրէնս տէֆղարով ԽՌ հոգի եասըր թուրք, զայլմնի, չափունի, զատիք եւ այլ մեծ գլխներ, անթիւ ենկիշարիք, սբահիք, այլ եւ կանայք, չօրվա- 20 ճիք, բէյիզնիք եւ փարթամ վաճառականք,